

Հավելված

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի  
ղեկավարի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 255  
որոշման

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի  
ղեկավարի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 150 որոշման

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի  
ղեկավարի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 65 որոշման

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի  
ղեկավարի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 277 որոշման

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի  
ղեկավարի 2011 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 686  
որոշման

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի  
ղեկավարի 2013 թվականի ապրիլի 25-ի թիվ 288-Ա որոշման

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի  
ղեկավարի 2015 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 551-Ա  
որոշման

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ  
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ  
ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՐՏԱՇԱՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ**

1.3-1

/ծածկագիրը/

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ աշխատակազմ/ քաղաքացիական կացության ակտերի գրանցման Արտաշատի տարածքային բաժնի /այսուհետ՝ բաժնի/ պետի պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի երրորդ ենթախմբում:
2. Բաժնի պետին <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով /այսուհետ՝ օրենք/ սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի ղեկավարը /այսուհետ՝ համայնքի ղեկավար/:

**2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

3. Բաժնի պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին և /կամ/ աշխատակազմի քարտուղարին:

